

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

05.08.2014թ.

12⁰⁰ Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ
Ա. Ղահրամանյան:

12¹⁵ Օրակարգի ներկայացում և հաստատում:

12³⁰ Համայնքներում առկա երիտասարդներին առնչվող խնդիրների և
դրանց լուծման ուղիների մասին քննարկում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

05.08.2014թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 15-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը, ՋԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝

1. Համայնքներում առկա երիտասարդներին առնչվող խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին քննարկում:


Նիստի օրակարգը հաստատելուց հետո, խորհրդի անդամները, ինչպես որ նախանշվել էր նախորդ նիստի ավարտին, ներկայացրին համայնքներում երիտասարդների կողմից վեր հանված խնդիրները:

Արշալույս գյուղական համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Կարեն Սիմոնյանը առաջ քաշեց հատկապես գյուղական համայնքներում երիտասարդների զբաղվածության հարցերը: Մյուս համայնքների ներկայացուցիչները նույնպես կարևորեցին այդ խնդիրը:

Որոշվեց՝

Համայնքներում տարածել տեղեկատվություն Արմավիրի ՓՄՁ և Արմավիր զբաղվածության կենտրոնների կողմից կազմակերպվող դասընթացների մասին, և աշխատանքներ տանել դրանցում երիտասարդության ներգրավվածությունը խթանելու ուղղությամբ:

Խորհրդի նախագահ՝



Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝



Ա Ավետիսյան